

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Էջ

Մխիթար Աբրահամյանի 200-ամեակը. 49

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. Յ. Թորոսյան. - Ս. Եփրեմի և իր ճանը «Յայ-լակերպութիւն Տեառն» 53

ԱՐԱՄ ԵՐԵՄԻԱՆ. - Աշուղ Բաղդէր Օղլի Ղազար. 55

ՊՈՅՑ. Լ. ԿԻՐԵՂԵԱՆ. - Էջմիածնի Բուն Բարեկենդանը 1655 թուականին 68

ՏՈՔՏ. ՅՈՎՀ. ԱՐԹՈՒՆԵԱՆ. - Սրբիկ կամ Սորուկ . 73

Յ. ԳԻՐԵՍԵԱՆ. - Իմ պատասխանս Հայկ Պէրպէրեանի «Երկու ճշտումներ»-ուն 74

ԳՐԱԿԱՆ

ԱՆԱՅԻՍ - Դիմապատկեր (Թ. Թերզեանի) 76

ՊԵՏԹՐԻՍ ԵՐԵՄԵԱՆ. - Վիկտորիա Աղանուր . 78

ԱՐՄԱՆԻՐԵԱՆ. - Ան լուսածինն Մխիթար 51

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵԱՆ. - Երկարէ՛ք ինձ ձեռքերդ. 81

Զ. ՊԼՊՈՒԼ. - Ս. Ղազար 87

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. - Կոյրիկն երգը 89

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ. - Քրիստոսի գերեզմանին ծաղիկները 90

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Հ. Մ. Ճ. - Արշակ Ֆէթվաճեան և Հ. Աւետիս . 82

ՊՈՅՑ. Խ. ԳՈՒՇԵԱՐԵԱՆ. - Հայկական ՍՍՈՒ. Գե-տուքիւնները Ալազանիային ողջոյնի նա-մակը առ Հ. Ղ. Տայեան 88

ԳԻՏԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ. - Տ. Ք. Մանասէ Սեւակ. 91

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Շնորհաւորութիւններ և զնահատականեր «Բազմավէպ»-ի յորեւեանին առթիւ 97

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

ԽՄԲ. - † Տեղբան Պողոսեան 99

ARTICLE DE FOND

PAGE

Le II^{me} Centenaire de la mort du Vénérable Abbé Mékhitar 49

PHILOLOGIE

P. Jean Thorossian. - St. Ephrem et son homélie sur la Transfiguration de Jésus-Christ 53

Aram Yéremian. - Le trouvère arménien: Bagher Oghli Lazare 55

Prof. L. Gurékian. - Le Carême à Etchmia-dzine en 1655 68

Dr. Jean Artinian. - Camélina 73

H. Kurdian. - Ma réplique aux deux cor-rections du Mr. H. Berbérian 74

LITTÉRATURE

Anaïs. - La figure (du poète Thomas Ter-zian) 76

Béatrice Yéretzian. - Vittoria Aganoor (é-tude) 78

Arnavirian. - Au glorieux Mékhitar (poésie) 51

P. H. Hovhannessian. - Étendez vos mains (poésie) 81

Z. Belboul. - St. Lazare (poésie) 87

P. M. Djanachian. - Le chant de l'aveugle (poésie) 89

Aramaïs Sirabian. - Les fleurs du Saint Sépulcre de Jésus-Christ 90

BEAUX-ARTS

P. M. Dj. - Le peintre Archag Fétvadjian et le P. Alichan 82

Prof. Kouchenarian. - La lettre de l'Acadé-mie des Sciences de l'Arménie, adressée au Rév. P. L. Dayan 88

SCIENCE

Hagop Kouyoumdjian. - Le docteur Manassé Sévag 91

DIVERS

Félicitations et appréciations pour le Centenaire de «Pazmaveb» 97

NÉCROLOGIE

† Mr. Dicran Boghossian 99

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843-1948

106-րդ ՏԱՐԻ



ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ

ԹԻԻ 3-4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԻԻԹԱՐ ԱԲԲԱՀՕՐ ՄԱՀՈՒԱՆ 200-ԱՄԵԱԿԸ

Դարերու հետ կը մըցին մեծ դէպքերը: Մեծն Մխիթար երկուհարիշր յիշուն տարիէ ի վեր կը պարտադրէ իր անունին և իր գործին շուրջ հա-մազգային պաշտամունք: Մխիթար այն դէպքերէն է որ ժողովուրդներու կեանքին մէջ որպէս գաղափարական մը անձնաւորիչ ոգի, կը տիրապետէն մտքերու վրայ, կ'աշինքներէն զանկը՝ առաջնորդելու համար յոյսի ձաւքայէն դէպի ակերը գիտութեան և ճշմարտութեան:

Ամէն գարնան երբ Ապրիլ 27-ին կը նորոգուի յիշատակը իր մահուան տարեդարձին՝ նոր կեանքի մը քրքռացումը կարծես իր անմահական աճիւն-ներէն կը փոխանցուի մեր հոգիներէն ներս, նոր յոյսերու ուսի շարունակումը կ'անձրեւէ մեր մտքին մէջ՝ փարատելով տարակոյսի, դեղեռնուի տաղան-պեցոցիչ մաշախոշոր, որ մերք ընդ մերք կու գայ պաշարել մեզ ի տես մեր ազգային ձախտագրին յարափոփոխ ընթացքին:

Մխիթար հեղինակը մեր վերածնունդին, եղաւ միանգամայն մեր ա-պագային պատգամատու Մարգարէն: Եթէ այսօր հայ ազգը իր անցեալին, իր նախնեաց լեզուին ու մտաւորական ժառանգութեան տէրն է, այդ կը պարտի Մխիթարի յուշանշան համարին և իր անդամ յուշանշան կեդրոնին:

Մեր ժողովուրդը ուրիշ ամէն ժողովուրդէ աւելի կարօտ ունի իր փառքի մեծ Զատակներուն հետ շարունակական հաղորդակցութեան մէջ ապրելու: յորեւեանները, զոր կը տօնախմբենք, կը ծառայեն ստոյգապէս այդ նպա-

տակին, վերանորոգելու համար մեր ուժերը, ամրացնելու մեր տեղագրին փարոշներ մեզի կենսունակությունն տուող գաղափարականներուն, Կրօնքի և Ազգոթեան ողջամիտ սկզբունքներուն, ոչ տարանջատ՝ այլ միաձույլ գոգոթեանը ներշնչումի այդ երկու աղբիւրներուն, որոնց ձշմարիտ փարոսպետությունը ինքն Մեծն Մխիթար եղաւ որ աշակերտ առաջին անգամ:

Առաջիկայ 1949-ի Ապրիլին, ծաղիկներու բուսումնաւէտ ամսոյն, 200-ամեայ Յոբելեանն է այդ մեծ Հայուն մահուան:

Մխիթարեան Միաբանութիւնը կու տայ այժմէն ազդր այդ նշանակալից Յիշատակին, որ անտարակոյս ազգային մարտնչին և գաղութային կեդրոններու մէջ պիտի գտնէ իր խանդավառ արձագանգը: Քաղաքական անորոշ կացութեան մը երկիւղը կը տագնապէ ասկայն մեր միտքը, որ մի գոցէ աշխարհ կրկին ահաշուրազոյն պատերազմի մը հրդեհով յեղաշրջոյն, փտանգելով մեր ծրագիրը: Եթէ վերահաս համաշխարհային տխուր պարագաներ չփրկուին մեզ, պիտի ունենանք հոգեկան անհոշ մխիթարութիւնը վայելելու Մխիթարի մեծ հոգիէն ձառագայթող լոյսին բոլոր գեղեցկութիւնը 1949-ի յոբելեանական տարւոյն մէջ:

Երբ 1749-ի Ապրիլ 27-ին Ս. Ղազարոս նորակերտ մեկնատանին մէջ, - յետ տառապանքի մրոշրը ցլատակ քամելու ի սեր իր գաղափարական իրագործման, յետ իր կրանիդեայ կամքին գործքեանը զգետներու ամէն խոչընդոտ, և յետ դներու վանքին անտառան հիւրերը Վենետիկի մը պէս գեղարուեստական քաղաքի մէկ անկիւնը, որ այսօր հայուն և օտարին ողջադրութեան և գոչգոչութեան առարկայ է, - Մխիթար կը փակէր աչքերը անմահներու լոյսին մէջ, կատարելով նախախնամութեան իրեն յանձնուած գործը:

Այդ մեծ Հօր և աստուածաբան Վարդապետին զաւակները հպարտ են այսօր իրմով, անոնք՝ հաշտարիւմ իրմէ ժառանգած կրօնական ու ազգային սկզբունքներուն, շարունակած են և պիտի շարունակեն քաղել միշտ անոր մտքին ու սրտին գծած ուղիէն, ինչ ձեռով ալ ժամանակը և կամ մարդիկ յարուցանեն դժուարութիւններ, համոզուած՝ թէ այդ գործը որ աշակերտած է իրենց՝ Աստուծոյ գործն է, ուղղուած մեր տառապեալ ազգին հոգեւոր ու մտաւոր բարիքին և ցեղային մշտնջենաշարունակին: Մեզի հետ, գիտենք թէ բովանդակ Ազգն ալ, կը պարծի իր մեծ Զաւակին փառքովը, որ բերած է անհոշ ծառայութիւններ Հայ Եկեղեցոյն և Հայ Մշակոյթին, պայքարելով մեր կենսունակութեան դաշաձանող ահաշուր խաւարի մը տիրապետութեան դէմ:

Անտառան ուրախութեամբ է ուրեմն, որ հոս կոշտանք ազդր այդ յոբելեանական տօնախմբութեան, հետագային թողով հաղորդել հարկ եղած մանրամասնութիւնները:

ՄԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ



ԱՌԼՈՒՍԱԾԻՆՆ ՄԻԹԱՐ

Անմահներու դաբիրային, ով լուսածին
Դուն Մխիթար, Յեղիս Ոգին յաւերժական,
Հայ հանճարի սաւառնաթել հսկան անդին.
Դարերն անցեալ ու ապագայ երնեկ կու տան
Քու գարուն որ՝ տալով ճակտիդ համբոյրը մօր
Ծընաւ ըզքեզ լոյսի նրման ու փառաւոր:

Ինչ արշալոյս էր որ պատուեց յանկարծաթափ,
Հորիզոնի քողը մըթին, ու հեղեղեց
Ովկեան մը վառ երանգներու, եռուն, հրատապ:
Անըջական ինչ տեսիլներ ուրուագրեց,
Որոնց մէջէն Ապագայի գէմը պայծառ
Արեւու պէս գըծեց ուղին իր անմոլար:

Մեր խաւարած բերերն ահա, ծարաւ լոյսի,
Դարձան քեզի նայել անթարթ, ըզմայլական:
Ու նախ մեղմիկ, ապա ուժգին ճաճանչդ ոսկի
Իջաւ հանգիւ մեր հողին վրայ կորդ ու խոպան,
Եւ կեանք մը նոր ըսկըսաւ հոն ծիւ արձակել,
Առած լոյսեզ լոյս, շունչէզ շունչ երկնավայել:

Երկրէ երկիր ու ծովերէ ծով անցնելով՝
Երբ չափեցիր հորիզոններ մըտածումի,
Եւ խորացար հոգւոյդ ալքին մէջ խոկումով՝
Գըտար զԱստուած, կըրօնք ու սէր հայրենիքի,
Դուն այն օրէն որպէս արծիւ մը սըրաւտես
Տեսար գործիդ սահմանները լայն ու անտես:

5440-Ա.Բ.